

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 3/10

19 հունվարի 2018թ.

Քննարկվեց ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովի 31.10.2017թ. «ԷԿՈՄԻՔՍ» ՍՊԸ 25.09.2017թ. վարչական բողոքը բավարարելու վերաբերյալ թիվ 12/10 որոշման պահանջները կատարելու հարցը՝ կապված նոր վարչական ակտ կայացնելու հետ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ Հանձնաժողովի 05.09.2017թ. նիստում քննության է առնվել «ԷԿՈՄԻՔՍ» ՍՊԸ գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի ՀՏ 21.07.2017թ. N 1012211 ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է 50/2 որոշումը, որի համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի ՀՏ 21.07.2017թ. N 1012211 ակտի 3-րդ կետից նվազեցվել է ընդամենը 919.186 դրամ:

Ընկերությունը համաձայն չլինելով Հանձնաժողովի 05.09.2017թ. թիվ 50/2 որոշման հետ, այն բողոքարկել է ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով:

Հանձնաժողովի 05.09.2017թ. թիվ 50/2 որոշման դեմ «ԷԿՈՄԻՔՍ» ՍՊԸ-ի կողմից բերված բողոքի քննության արդյունքում ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովի կողմից 31.10.2017թ. կայացվել է թիվ 12/10 որոշումը, որի համաձայն «ԷԿՈՄԻՔՍ» ՍՊԸ-ի 25.09.2017թ. վարչական բողոքը բավարարվել է՝ բեկանվել է Հանձնաժողովի 05.09.2017թ. թիվ 50/2 որոշումը, ինչպես նաև պարտավորեցվել է Հանձնաժողովին կայացնել նոր վարչական ակտ:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովի 31.10.2017թ. թիվ 12/10 որոշմամբ արտահայտված դիրքորոշումը և ղեկավարվելով ՀՀ Հարկային օրենսգրքի 443-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է՝

1. «ԷԿՈՄԻՔՍ» ՍՊԸ-ի բողոքը բավարարել:
2. ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի ՀՏ 21.07.2017թ. N1012211 ակտի 3-րդ կետից նվազեցնել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի համաձայն հաշվարկված տույժը՝ գումարով 89.999 դրամ:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ